

477

Σ 6 p h u p 2 k p

83 U
4-96

10-1914.

83-93

9-96

341

ՍԻ ՀԱՅՈՅ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՎԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ № 21

ԳՐԻՄ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ

ՀԵՔԻԱԹ ՆԵՐԸ

Ռուսերէնից թարգմանեց

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ



2004

ՊՐԱԿ I

1. ԼՈՒՍԵՐՆԵՍ ՈՒ ՎԱՐԴԵՐՆԵՐ 2. ՍԱԴԱՐԱՆԻ ԱՂԶԻԿ 3. ԶԱՐԲԱՆԱԼԻ ԱՇՈՒՂԸ

83-93

9-96

un

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՅ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ № 21

ԳՐԻՄ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ

ՀԵՔԻԱԹ ՆԵՐԸ

Ռուսերէնից Թարգմանեց

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՊՐԱԿ I

- 1 ԼՈՒՍԵՐԵՍՆ ՈՒ ՎԱՐԴԵՐԵՍԸ
- 2 ՍԱԳԱՐԱԾ ԱՂԶԻԿԸ
- 3 ԶԱՐՄԱՆԱԼԻ ԱՇՈՒՂԸ

○○○○○

ԹԻՖԼԻՉ

Պատրան Ե. Աղաճեանի, Պոլից. 7.

1914





ԼՈՒՍԵՐԵՍՆ ՈՒ ՎԱՐԴԵՐԵՍԸ

Լինում է չի լինում մի աղքատ որբայրի կին: Ապրելիս է լինում մի փոքրիկ տնակում: Տնակի առջև մի պարտեզ է ունենում, պարտեզի մէջ երկու վարդի թուփ, մինը սպիտակ վարդի, միւսը կարմիր: Էն վարդի թփերի նման էլ երկու փոքրիկ աղջիկ է ունենում. մէկի անունը Լուսերես, միւսինը Վարդերես: Երկուսն էլ էնքան էին լաւ ու բարի, էնքան սրտով մաքուր ու աշխատասէր, որ կարծես թէ հէնց էն երկուսն էին էնպէս, որ կային բովանդակ աշխարհքում: Միայն թէ Լուսերեսն աւելի հանգիստ էր ու քնքոյշ, իսկ Վարդերեսն աւելի կայտառ ու աշխոյժ:

Վարդերեսը շատ էր սիրում հանդերում ու մարգերում թռչկոտել, ծաղիկ քաղել ու թռչու բռնել, իսկ Լուսերեսը նստում էր տանը, տնտեսութեան մէջ օգնում էր մօրը, կամ

թէ չէ, եթէ գործ չըկար, նրա համար գիրք էր կարդում: Երկու քոյրն էլ էնքան էին իրար սիրում, որ հէնց թեթեւ տառ էին ման գալի, ու երբ Լուսերեան ասում էր.

—Մենք երբէք չըպէտք է բաժանուենք իրարից՝ Վարդերեսը պատասխանում էր.

—Երբէք, քանի կենդանի ենք: Իսկ մէրն աւելացնում էր.

—Մէկդ ինչ որ կունենաք՝ պէտք է կիսէք միւսիդ հետ:

Երկուսով յաճախ գնում վազվզում էին անտառներում ու պտուղ էին քաղում. ու ոչ մի կենդանի փառ չէր տալիս, ամենքը վստահ գալիս մօտենում էին նրանց: Նապաստակը հէնց նրանց ձեռքից առնում որոճում էր կաղամբի թերթիկները, եղնիկն արածում էր նրանց կողքին, եղջերուն անհոգ ու զւարթ անցնում էր նրանց մօտից, իսկ թռչունները հանգիստ ունենալին թառած երգում էին, ինչպէս կարող էին երգել և ինչ որ գիտէին: Եթէ բան է, ուշանում էին անտառում ու գիշերը վրայ էր հասնում, միասին պառկում էին մասուռի վրայ ու քնում մինչև լուսաբաց: Իրենց մէրն էլ գիտէր ու անհանգիստ չէր լինում:

Մի անգամ էլ, երբ անտառում գիշերում են ու լուսաբացին զարթնում են՝ տեսնում են կողքներին կանգնած ճերմակ ու փայլուն շորերով մի սիրուն երեխայ: Էս երեխան վեր է կենում, ժպտալով նրանց նայում ու, առանց մի խօսք ասելու, հեռանում, մտնում անտառի խորքն, անհետանում: Էստեղ երեխէքը մտիկ են տալիս չորս կողմերը, տեսնում են, որ իրիկունը մթնով եկել են քնել մի անդունդի եզերքի ու եթէ մթնումը մի երկու քայլ էլ արած լինէին՝ պէտք է անդունդը լինէին գլորւած: Գալիս են իրենց մօրը պատմում: Մէրն ասում է.

—Էս անպատճառ պահապան հրեշտակն ինքն է եղել, որ միշտ պահպանում է բարի երեխանց:

Լուսերեան ու Վարդերեսն իրենց մօր անակն էնպէս իստակ ու մաքուր էին պահում, որ մտիկ անելիս մարդու գիւր էր գալիս:

Ամառը գլխաւորապէս Վարդերեսն էր տան բանը շինում ու ամեն առաւօտ, մօր զարթնելուց առաջ անկողնի կողքին մի փունջ ծաղիկ էր դնում, փնջի մէջ էլ երկու վարդ՝ մինը սիպտակ, միւսը կարմիր: Ձմեռը Լուսերեան էր կրակ անում ու պղինձը դնում կրակին: Պղինձն էլ էնպէս մաքուր սրբած էր լինում, որ ոսկու նման պսպղում էր: Իրիկուններն էլ, երբ դուրսը ձիւնը փաթիլ փաթիլ բրդում էր, մէրն ասում էր. — Լուսիկ ջան, գնա դռան փակը գցիր: Յետոյ նստում էին բուխարու առջև: Մէրը գիրք էր կարդում աղջիկների համար, իսկ աղջիկները լսում էին ու մանում: Կողքներին պառկած էր լինում իրենց գառը, ետևները թառի վրայ քնած սիպտակ աղաւնին, գլուխը կոխած թևի տակը:

Մի իրիկուն էլ, երբ էսպէս նստած են լինում, մինը դուռը ծեծում է: Մէրն ասում է.

—Վարդուշ ջան, շուտ վերկաց դուռը բաց արա. անթիւան ճամփորդ կըլինի—դուռը ծեծում է:

Վարդերեսը գնում է դռան փակը ետ գցում, համոզւած որ դուռը ծեծողը մի խեղճ մարդ պէտք է լինի. մին էլ ինչ տեսնի. — դռան ետևը կանգնած մի անագին արջ, որ դուռը բացելուն պէս ներս է կոխում իր հաստ գլուխը: Վարդերեսը վախից ճչում է ու ետ թռչում, գառն սկսում է մայել, աղաւնին թևերն է թափահարում, իսկ Լուսերեսը մտնում է մօր մահճակալի ետևը: Այնինչ արջը լեզու է լինում ու խօսում: Ասում է. — Ինչո՞ւ էք վախենում. ինձանից մի վախենաք, ես ձեզ փառ չեմ տալ: Քիչ էր ֆնում ցրտից սառչէի, եկայ մի քիչ տաքանամ:

—Վայ, խեղճ իմ արջ ախպէր, բացականչում է մայրը: Դէ արի, արի կրակից մօտիկ պառկիր, միայն թէ զգոյշ կաց, բուրդը չըմրկի... Աղջկէքը, Վարդուշ ջան, Լուսիկ ջան, դուրս եկէք, եկէք էստեղ, արջ ախպէրը ձեզ ձեռք չի տալ, արջ ախպէրը բարի է:

Աղջիկները դուրս են գալիս, կամաց կամաց մօտկանում են արջին, գառն էլ, աղաւնին էլ, ու շուտով ամեն ան ու

երկիւղ վերանում է մէջ տեղից: Արջն էլ ասում է.

— Երեխէք ջան, թէ կարաք՝ էս իմ բրդի ձիւնը մի թափ տւէք:

Աղջիկները վազում են աւելը բերում, արջի բուրդը մաքուր սրբում են, ու արջը բաւականութիւնից մոնչալով մեկնում է կրակի առջև: Աղջկերքը ձեռաց ընտելանում են իրենց անձոռնի հիւրին ու սկսում են հետը հանաքներ անել: Բրդի հետ են խաղում, ականջներից են քաշում, մէջքին են կանգ-



նում, յատակին դէս ու դէն են գլորում, ճիպոտով խփում են, իսկ եթէ սկսում է վրռալ՝ ծիծաղից թուլանում են: Արջի իրենք քէֆն էլ է գալիս: Բայց երբ շատ են նեղացնում՝ վրռւում է.

— Մի տանջէք ինձ, մի սպանէք, այ աղջկերք,

Այ Լուսերես, այ Վարդերես,

Ձեր սիրելի փեսան եմ ես:

Քնելու ժամանակը որ գալիս է ու աղջիկները գնում են քնեն, մէրն արջին ասում է.

— Դէ դու էլ օջախի առաջը պառկիր, արջ ախպէր, համ տաք կը լինի տեղդ համ քամուց պատրաստ:

Օրը բացւում է թէ չէ, արջը էլ ետ ձնի մէջ քարշ գալով գնում է դէպի անտառի խորքը: Էն օրւանից էս արջը սովորութիւն է շինում, ամեն իրիկուն միևնոյն ժամին գալիս է սրանց մօտ: Պառկում է օջախի առջևն ու թողնում է հետը խաղան, ինչքան կուզեն: Սրանք էլ էնպէս են սովորում, որ իրիկունները, մինչև արջը տուն չի գալիս, դուռը փակում չեն:

Ձմեռն անց է կենում. գարունքն ընկնում է, երկիրը դալարում, ու մի օր էլ արջը Լուսերեսին ասում է.

— Դէ հիմի արդէն ժամանակն է, որ ձեզանից հեռանամ. ամբողջ ամառը էլ ինձ չէք տեսնիլ:

— Ո՛ւր ես գնում, արջ ախպէր, հարցնում է Լուսերեսը:

— Պէտք է անտառը գնամ, իմ գանձերն ու հարստութիւնները չար թզուկներից պաշտպանեմ: Ձմեռը գետնի սառած ժամանակը նրանք անհետանում են իրենց մթին այրերում, բայց արեւը երկիրը տաքացնում է թէ չէ՝ էդ գոյ անպիտանները լուս աշխարհք են դուրս գալիս ու՝ ինչ որ աչքըները տեսնում է՝ էլ տիրոջն օգուտ չի անում, գողանում են տանում:

Արջից բաժանելու համար շատ է տխրում Լուսերեսիկը, իսկ երբ դուռն առաջին բաց է անում որ գնայ՝ յանկարծ արջն ընկնում է դռան փակին, բրդիցը մի փունջ մնում է փակի վրէն ու բրդի տակիցը ոսկու պէս մի բան է պսպղում: Երեւի աչքիս թւաց, մտածում է աղջիկն ու մտքիցը հանում է էս բանը: Արջն էլ շտապում է դէպի անտառն ու անհետանում է ծառերի ետևը:

Մի օր էլ մէրն աղջիկներին անտառն է դրկում, որ գնան ցախ ու մախ հաւաքեն բերեն: Գնում են աղջիկները, ման են

գալիս ման, մին էլ տեսնում են անտառում ընկած մի ծառ, ու էս ծառի վրայ, խոտերի միջին մի բան էս կողմն է թըռչում, էն կողմն է թռչում. բայց թէ ինչ բան է — գլխի չեն ընկնում: Մօտենում են, տեսնում են մի թզուկ, դէմքը պառակտած, միրուքն էլ սի ալ ու երկար, երկար: Էն, որ ասում են՝ ինքը թիզ ու կէս, միրուքը գազ ու կէս, հէնց էն ինքն է, որ կայ: Միրքի ծէրը մնացել է ծառի ճեղքում, դէս ու դէն է ընկնում ու չի իմանում թէ ոնց հանի: Աղջկերանցը որ տեսնում է՝ արնոտ աչքերը վրաները չոռւմ է ու գոռում:

— Ի՞նչ էք տնկել էդտեղ: Չէք կարող մօտ գալ ու օգնել:

— Էդ ի՞նչ է պատահել, գաճաճ քեռի, հարցնում է Վարդերեսը:

— Ապուշ, անասուն, հարցնում է ի՞նչ է պատահել... Ի՞նչ պէտք է պատահէր. ուզում էի ծառը ճղեմ, մանր տաշեղներ անեմ մեր խոհանոցի համար, թէ չէ մեծ փէտերից էրւում են մեր կերակուրները. մենք հօ էնքան շատ չենք ուտում, ինչքան դուք, էդ կոպիտ ու անկշտում խալխդ. — սեպը զարկեցի, յանկարծ դուրս թռաւ, ծառի ճեղքն էլ էնպէս արագ փակեց, որ վրայ չը հասցրի միրքիս ծէրը միջիցը հանեմ: Միրքիս ծէրը մնաց ծառի ճեղքի մէջն ու ահա էսպէս չարչարում եմ, չեմ կարում հանեմ, իսկ դուք կանգնել էք, բերաններդ բաց էք արել ու հրհռում էք. ապուշներ, լպըստածներ... թո՛ւ, գահլէս ինչպէս է գնում...

Աղջիկները վրայ են գալի, ուժ են անում, քաշում են, քաշում են, չեն կարողանում թզուկի միրուքը ծառի ճեղքիցը հանեն:

— Կացէք ես գնամ մարդիկ կանչեմ, ասում է Վարդերեսը:

— Յիմարի գլուխ, — վրայ է պըծնում թզուկը. — ի՞նչ եմ անում մարդիկը: Դուք հերիք չէք, որ գահլէս գնայ, դեռ ուրիշներին էլ կանչեցէք: Կարող էք — մի ուրիշ բան էլ հնարեցէք...»

Լուսերեսն ասում է.

— Մի քիչ հաճեցիր, ես ճարը գտայ: — Ասում է, գրպանից մկրատը հանում ու թզուկի միրքի ծէրիցը կտրում: Թզուկն ազատւում է թէ չէ՝ իսկոյն շալակն է գցում իր ոսկով լիքը տոպրակը, որ ծառի փշակումը պահել էր, ու գնում է քթի տակին փնթփնթալով:

— Ա՛յ քեզ անտաշ խալխ... եկան էս փառաւոր միրքիս ծէրը կտրեցին թողին: Գետինը մտնէք դուք, գետինը...»

Էսպէս մըթմըթալով տոպրակը շալակում է առանց ետ մտիկ աւալու գնում:

Էս դէպքի վրայ մի քանի ժամանակ անց է կենում, մի օր էլ աղջիկները գնում են ձուկը բռնելու: Գետափին մօտենում են, տեսնում են ծղրիդի նման մի բան էստեղ ետ ու առաջ է թռչկոտում, ու քիչ է մնում ջուրն ընկնի: Մօտ են վազում, տեսնում են իրենց ծանօթ թզուկը:

— Էդ ի՞նչ ես անում էդտեղ, գաճաճ քեռի, — հարցնում է Վարդերեսը:

— Ապուշներ, չէք տեսնում ինչ եմ անում... Չէք տեսնում՝ անիծած ձուկն ինձ ուզում է ջուրը քաշի...»

Դու մի ասիլ թզուկը գետափին նստած կարթով ձուկը բռնելիս է լինում, յանկարծ քամին փչում է ու միրուքը փաթաթում կարթի թելին: Հէնց էդ խառնած ժամանակը մի մեծ ձուկն է ընկնում կարթի մէջն ու թզուկին զօռ է անում, քաշում է դէպի ներս: Սա գետափի թփերից ու խոտերից է կպչում, բայց բան չի դառնում, ձուկը տանում է: Աղջիկները ժամանակին վրայ են հասնում, իրեն պինդ բռնում են ու աշխատում են միրուքը թելից բաժանեն, չեն կարողանում, էնպէս խճճած են լինում իրար: Էլ ուրիշ ճար չի մընում, մկրատը հանում են դարձեալ միրքիցը կտրում, իրեն ազատում: Ազատւում է, տեսնում է միրքիցը էլի կտրել են՝ սկսում է վրաները ճղճղալ:

— Ա՛յ դուք անասուններ, էս միթէ կարգ է հը՞: Դուք համարձակէք իմ երեսն էսպէս ալլանդակել... Հերիք չէր էն օրը միրքիս ծէրը կտրեցիք, հիմի էլ ամենալաւ մասը տարաք,



հը... Ես հիմի ի՞նչպէս մերոնց երևամ... Ա՛յ գետինը մտնէք
դուք, գետինը...»

Վերցնում է իր մարգարտով լիքը տոպրակը, որ թագցրել
էր եղէգնուտում, ուստի՞ն է ձգում ու անյայտանում մօտիկ
քարի ետևը:

Սրանից մի քանի օր ետը մէքն իր աղջիկներին մօտա-
կայ քաղաքն է ուղարկում՝ թել, ասեղ, մատնոց և ուրիշ էս
տեսակ մանրուք առնելու: Մի քարքարոտ դաշտով անց կե-
նալիս էս աղջիկները նկատում են, որ մի մեծ թռչուն օդում
պտուտ եկաւ, պտուտ եկաւ ու նետի նման ներքե սլացաւ,
զարկեց մի քարի տակի: Թռչունի դարկելուն պէս մի սրտա-
ճմլիկ աղաղակ է բարձրանում, ու էս ձէնի վրայ աղջիկները
վազում են, տեսնում են իրենց հին ծանօթ թզուկը. արծիւը
ճանկել է, ուզում է տանի: Բարեսիրտ աղջիկները իսկոյն
բռնում են թզուկից ու կախ ընկնում, ու էնքան են արծւի
հետ էս կողմն էն կողմն ընկնում, էնքան են կռիւ տալիս,
մինչև որ արծիւը որսը թողնում է՝ թռչում, գնում: Առաջին
սարսափն անց է կենում թէ չէ՝ էս թզուկը նորից իր ճըղ-
ճըղան ձէնովը աղջիկներին վրայ է պրծնում.

— Էս ի՞նչ արիք. չէի՞ք կարող աւելի քնքոյշ ժաժ գալ,
հը... բարակ շորերս պատառոտեցիք թողիք... անճոռնի ան-
պիտաններ...

Ճղճղում է, անգին քարերով լիքը տոպրակը ուսը գցում
ու անցնում քարերի ետևը, կորչում գնում իր քարանձաւը:
Աղջիկներն արգէն սովոր են լինում նրա ապերախտութեանը,
շարունակում են իրենց ճամփէն, քաղաքում իրենց առուտու-
րն անում են ու ետ վերադառնում: Վերադարձին գալիս են
դարձեալ պատահում հանդում մի տեղ նստած թզուկին: Տես-
նում են մի իստակ տեղ իր տոպրակը շուռ է տւել,
թափել, կիտել անգին քարերը, մտածելով թէ էնպէս
ուշ էլ անց կենող ու տեսնող չի լինիլ: Վերջալուսի շողքերն
ընկել են փայլուն քարերի վրայ ու գոյնզգոյն քարերն էնպէս են
վառւում, շողշողում, հուրհուրաւին տալիս, որ աղջիկները

տեղները մարում են, մնում հայիլ մայիլ կտրած՝ մտիկ անելիս:

— Ի՞նչ էք բերաններդ բաց արել կանգնել», գոռում է թղուկը, ու նրա գորշ դեմքը փոխում է ծիրանի գոյնի: Ուզում է, ինչքան որ կարող էր, մի հայհոյի, մին էլ յանկարծ մի մռնչոց է լսում ու անտառից մի արջ է դուրս վազում յարձակում վրէն: Սարսափահար թղուկը տեղիցը վեր է ցատքում, բայց մինչև վրայ կը հասցնէր մտնի իր խորշը՝ արջը բռնում է: Ջարհուրած սկսում է աղաչել.

— Իմ սիրելի, իմ տէր արջուկ, առ, ահա քեզ լինեն իմ բոլոր գանձերը, միայն թէ խնայիր ինձ: Մտիկ տուր, մի տես, թէ ինչ շքեղ անգին քարեր են էստեղ թափւած: Ինձ բաշխիր իմ կեանքը: Ի՞նչ օգուտ ես տանելու, եթէ սպանես ինձ, էսպէս մի փոքրիկ, վախտ արարածի: Ատամիդ տակին իսկի չեմ էլ երևալ: Ա՛յ, թէ ուզում ես ուտես՝ էս անօրէն աղջիկներին կեր, հասկանում եմ. լորի պէս գեր ու ախլիկ-անուշ պատառ են... սրանց կեր, քեզ անուշ լինի...»

Արջը ահանջ էլ չի դնում թէ ինչ է ասում թղուկը, ծանր թաթը ետ է տանում ու որ մի զարկ է հասցնում՝ թղուկս տեղն ու տեղը հանգչում է: Աղջիկները լեղապատառ սկսում են փախչել: Արջը ետեններից կանչում է.

— Լուսիկ, Վարդուշ, մի վախենաք, սպասեցէք, ես էլ եմ ձեզ հետ գալիս:

Աղջիկները ճանաչում են, որ էս իրենց սիրելի արջի ձէնն է. կանգնում են: Արջը մօտենում է նրանց, ու յանկարծ մորթին վրէցն ընկնում է, տակիցը դուրս է գալիս մի գեղեցիկ պատանի, ոտիցը գլուխ ոսկու մէջ կորած:

— Ես թագաւորի տղայ եմ, ասում է նա: Էս անսիրտ թղուկը ինձ կախարդել զազան էր շինել ու յափշտակել իմ բոլոր գանձերը: Եւ ես դատապարտւած էի անտառներում թափառելու մինչև սրա մահը: Ահա վերջապէս սա առաւ իրեն արժանի պատիժը, իսկ ես՝ իմ առաջնան պատկերը:

Էստեղից՝ գնում՝ առնում են էն անհուն գանձերը, որ դիզել էր թղուկը իր մթին քարանձաւում: Ապա թէ թագաւորի տղէն ամուսնանում է Լուսերեսի հետ, իսկ եղբայրը Վարդերեսի: Հետեւեւն առնում են և աղջիկների պառաւ ծօրը, գընում ետ իրենց աշխարհքը, ապրում են ուրախ ու երջանիկ: Ու սրանցից մէկի լուսամուտի տակ սիպտակ վարդի թուփն է ծաղկում, միւսի լուսամուտի տակ՝ կարմիր վարդի թուփը:



Վարդերես
Լուսերես

ՍԱԳԱՐԱԾ ԱՂՋԻԿԸ



Լինում է չի
լինում մի պառաւ,
շատ պառաւ կին:
էս պառաւն իր սա-
գերի հետ ապրելիս
է լինում անմարդա-
բնակ լեռների մէջ՝
մի փոքրիկ անա-
կում: Բնակատեղն
էլ չորս կողմից
շրջապատւած է լի-
նում անտառով, ու
պառաւն ամեն օր
իր ձեռնափէտը վեր-
ցնում է, ձեռնա-
փէտին յենւած
ամբամբալով գնում
անտառ: Գնում է
սագերի համար խոտ

է անում, պտուղ է քաղում, հաւաքում է՝ ինչի որ ձեռքը
հասնում է ու շալակում է բերում տուն: Տեսնողն ասում է՝
հիմի որտեղ որ է, խեղճ պառաւն իր բեռան տակին կըճկուի,
բայց միշտ էլ յաջողակ տուն է հասցնում: Ճամփին էլ, բան
է, եթէ մարդ է պատահում, ուրախ ուրախ բարևում է.

— Բարի օր, ախպէր ջան: Տեսնում ես էսօր եղանակն
ինչ լաւ է: Հը՞, չը լինի թէ դարմանում ես, որ պառաւ տե-
ղովս էսքան շալակը տանում եմ: Ի՞նչ անենք, ամեն մարդ
պէտք է իրեն բեռը կրի:»

Սակայն մարդիկ չէին ուզում նրան պատահեն: Պատա-
հելիս էլ ճամփաները ծռում էին հեռից անց կենում: Իսկ
եթէ հէր ու որդի միասին կողքով անց կենալիս էին լինում,
հէրը որդուն կամաց զգուշացնում էր. «Տեսնում ես սրան.
սրանից հեռու կաց հա՛. սա կախարդ է...»

Մի առաւօտ էլ էս անտառով մի գեղեցիկ երիտասարդ է
լինում անց կենալիս: Սրեր վառ ու պայծառ լուսաւորում է,
թռչունները ծլվում, երգում են, զով հովը զըլզըլում, սըլ-
սըլում է տերևներում: Ու անցնում է երիտասարդը ու-
րախ, զւարթ: Ճամփին ինս-ջինս, մարդ չի պատահում: Մին
էլ տեսնում է մի պառաւ, ծառերի տակին չորած, մանգաղով
խոտ է անում: Գոգնոցը լիքը խոտն ու երկու զամբիւղն էլ
կողքին դրած:

— Էդ հնց ես էդքանը տանելու, նանի, հարցնում է երի-
տասարդը:

— Ուզեմ-չուզեմ՝ պէտք է տանեմ, որդի ջան, ի՞նչ անեմ:
Հարուստներն, իհարկէ, կարող են էսպէս բան չանեն, բայց
գիւղացու համար ասւած է.

Նա մի նայիլ նոր,

մէջքը վաղ է կոր...»

Ու, երբ տեսնում է երիտասարդը մնաց կողքին կանգնած՝
ասում է.

— Հը՞, գուցէ կը կամենաս ինձ օգնել: Մէջքդ դեռ ուղիղ
է, ծնկներդ առողջ, քեզ համար մի մեծ բան չի սա: Իմ տը-

նակն էլ էստեղից էնքան հեռու չի. ա՛յ, էս սարի ետևի հով-
տումն է: Ձեռաց կը հասնենք:

Երիտասարդը մեղքանում է պառաւին:

— Թէև, ասում է, իմ հէրը գիւղացի չի, հարուստ իշխա-
նի որդի եմ, բայց քո շալակը կը վերցնեմ, որ ցոյց տամ, թէ
մենակ գիւղացին չի ընդունակ ծանր բեռը կրելու:

— Դէ արի վեր կալ, հէնց ապրես: Եղած-չեղածը մի ժամ-
ւայ ճանապարհ է, քեզ համար դատարկ բան է: Հա՛, չը մո-
ռանաս, էս խնձորն ու տանձն էլ հետը:

Երիտասարդ իշխանը «մի ժամւայ ճանապարհի» անունը
որ լսում է, սկսում է տատանւել, բայց պառաւն օձիքը բաց
չի թողնում: Խոտի կապոցը շալակն է տալի, տանձ ու խըն-
ձորի զամբիւղներն էլ ձեռը:

— Տեսնում ես՝ ինչ թեթեւ է:

— Ո՛րտեղից է թեթեւ, անքում է երիտասարդը: Կապոցը
էնքան ծանր է, որ կարծես թէ քար լինի մէջը լցրած, իսկ
տանձ ու խնձորի զամբիւղները արճըճի նման կռներս պո-
կում են... Շունչս կտրում է...»

Ուզում է վեր գցի, պառաւը չի թողնում. հեզնում է,
ասում է.

— Տեսէք, տեսէք, ես իմ պառաւ տեղովը միշտ մենակ
տանում եմ, սա ջահէլ մարդ է՝ չի կարողանում... Էդպէս է.
բանը որ լեզւին գայ—կտրիճ էք, իսկ գործի գալիս—ետ ետ
էք գնում: Էլ ի՞նչ ես կանգնել: Ոտներդ ժաժ տուր՝ գնանք:
Միկնոյն է, էդ բեռն էլ ոչով քո ձեռիցն առնելու չի:»

Քանի դեռ հարթ ճամփով են գնում՝ էլի ոչինչ. բայց որ
դէմ են ընկնում սարերին, քարերն էլ ոտի տակիցը դուրս
են պրծնում՝ իրար ետևից ներքև թռչում՝ տեսնում է որ էս
արդէն ուժիցը վեր է: Քրտինքը ճակատը կոխում է, ու, մին
սառը, մին տաք՝ մէջքից հոսում:

Աղաչում է, ասում է.

— Նանի, էլ չեմ կարողանում գնամ, պէտք է մի քիչ
շունչ առնեմ:

— Ոչինչ, պատասխանում է պառաւը, երբ որ տեղ կը
հասնես—կը հանգստանաս: Ով գիտի, կարելի է մի օր սրա-
նից քեզ համար մի լաւ բան է դուրս գալի... Գնա՛...

— Դու իսկի խղճմտանք չես ունեցել, ա՛յ պառաւ, բար-
կանում է երիտասարդը և ուզում է շալակը մէջքից գցի,
բայց հրտեղից. կապոցն էնպէս է մէջքին կպել, ոնց որ թէ
հետը ծնւած լինի: Դէս է շուռ գալիս, դէն է պտըտում, ի-
րեն թափահարում, չի լինում, չի ազատում: Իսկ պառաւը վրէժն
ծրծաղում է ու, իր կեռ ձեռնափէտը ձեռին, էս կողմն, էն
կողմն է թռչկոտում:

— Ինչո՞ւ ես էդպէս բարկանում, աղա ջան. հէնց կար-
մրել ես՝ կասես հնդու հաւ լինես: Հանգիստ բեռդ տար, մի
տուն հասնենք, ես գիտեմ՝ քեզ ինչպէս կը վարձատրեմ:

Ինչ պէտք է անէր խեղճ երիտասարդը: Ուզէր-չուզէր
պէտք է հնազանդէր իր ճակատագրին ու քարշ գար պառաւի
ետևից:

Պառաւն էլ՝ քանի գնում են՝ էնքան ժրանում է ու ա-
րագանում, իսկ իր բեռն աւելի ու աւելի ծանրանում: Վերջը
մի տեղ էլ յանկարծ էս պառաւը թռչում է կապոցի վրայ ու
պինդ նստում երիտասարդի շալակին: Ինքն էլ թէև չոր չփի
նման, բայց մի հաստ ու կոպիտ գիւղացի կնգանից աւելի
ծանր է լինում: Երիտասարդի ծնկները դողդողում են, բայց
հէնց կանգնում է թէ չէ՝ պառաւը ճիպոտով կամ եղինջով
սկսում է ոտներին զարկել ու զարկել: Ախ ու ռիսով, թառանչ
քաշելով մինչև սարն է բարձրանում՝ էստեղից էլ հասնում
պառաւի տունը՝ քիչ է մնում տեղն ու տեղն ընկնի, հոգին
տայ:

Սագերը, որ պառաւին տեսնում են, թեւերը թափահարե-
լով շլինքները երկարացրած ուրախ ուրախ աղմկելով վազում
են դէմը, իսկ սագերի ետևից ճիպոտը ձեռին մի պառաւ կին
է գալիս, ինքը պնդակազմ ու բարձրահասակ, բայց սաստիկ
այլանդակ ու անճոռնի:



Գալիս է ու—Մայրիկ, ասում է, ինչ պատահեց քեզ, որ էսքան ուշացար:

—Ոչինչ, աղջիկս, պատասխանում է պառաւը, ինձ ոչ մի վատ բան չի պատահել: Ընդհակառակը, անտառում պատահեցի էս երիտասարդ պարոնին, որ իմ տեղակ իմ բեռը շալակեց բերեց: Էդ հերիք չէր, երբոր էս յոգնեցի, ինձ էլ զօռով շալակն առաւ: Ճամփէն էլ էնքան կարճ թւաց, որ չիմացանք ինչպէս եկանք: Շարունակ ծիծաղում էինք ու իրար հետ հանաքներ էինք անում:

Վերջապէս պառաւն էս տղի շալակից իջնում է, մէջքից կապոցն առնում, ձեռքերից զամբիւղները ու փաղաքուշ վրէն նայելով ասում.

—Դէ հիմի նստիր էստեղ շէմքում, հանգստացիր: Դու քո աշխատանքով պարգևի արժանացար ու էդ պարգևը էս քեզ կը տամ»: Յետոյ դառնում է սագարած աղջկանը.

—Դու գնա տուն, աղջիկս, ջահել տղի մօտ կանգնել էս, լաւ չի: Կրակի վրայ իւր չէն ածիլ: Պարոնը յանկարծ վրէղ կը սիրահարւի:»

Պարոնը էս որ լսում է՝ չի իմանում ինչ անի, լաց լինի թէ ծիծաղի: Մտքումն ասում է.

—Ա՛յ քեզ գեղեցկուհի. սա թէկուզ երեսուն տարով էլ ջահելանայ դարձեալ չի կարող իմ սիրտը շարժել, ուր մնաց հիմի:

Այն ինչ պառաւը փայում, փայփայում է իր սագերին, ոնց որ թէ իր երեխէքը լինէին, ու յետոյ աղջկայ հետ մըտնում են տնակը:

Յոգնած երիտասարդը ձգւում է վայրի խնձորենու տակի նստարանի վրայ: Օդը ջերմ ու բուրաւէտ: Չորս կողմը տարածւում է ընդարձակ դալար մարգագետինը՝ լիքը կապուտ ու դեղին ծաղիկներով: Մարգագետնի միջով, արևի տակ արծաթի պէս պսպլալով, փազում է վճիտ առակը, մէջը գնում են գալիս ձերմակ սագերը ու ճըղփում, լողանում:

—Ի՛նչ լաւ տեղ է, բացականչում է երիտասարդը: Բայց



էնքան յոգնել եմ, որ աչքերս կուլ են գնում: Պառկեմ աչքս մի քիչ կպցնեմ. էն էլ չըլնի թէ քնած տեղս քամին ոտներս տանի. էնպէս ուժից ընկել են, կարծես բամբակից լինեն:

Մի քիչ քնում է, պառաւը գալիս է հրում զարթեցնում: Ասում է.

—Վեր կաց, չի կարելի, որ դու էստեղ մնաս: Ճշմարիտ է, ես քեզ բաւական չարչարեցի, բայց հօ էլի կաս ու կենդանի ես: Հիմի քեզ կը վարձատրեմ: Եթէ փող տամ քեզ կամ մի ուրիշ գանձ, ոչ փողի կարիք ունես, ոչ ուրիշ գանձի. դրա համար էլ քեզ մի բան կը տամ, որ փողից էլ է թանգ, գանձից էլ:

Ասում է ու ձեռը տալիս մի փոքրիկ արկղ՝ ամբողջը զմրուխտից:

—Ա՛ռ, պահիր քո աչքի լուսի պէս, և սա քեզ երջանկութիւն կը բերի:

Երիտասարդ իշխանը յանկարծ իրեն ուժեղ ու կայտառ է զգում. տեղից վեր է կենում, նւէրն առնում, շնորհակալութիւն է անում պառաւին ու ճանապարհ է ընկնում առանց մտիկ տալու պառաւի աղջկայ վրայ: Ճանապարհից բաւական կտրել էր, դեռ ետեւից լսում էր սագերի ուրախ ճղճողոցը:

Երեք օր ամայութեան մէջ մոլորւած թափառելուց յետոյ երիտասարդը դուրս է գալիս մի մեծ քաղաք: Ինքը քաղաքին անծանօթ, քաղաքն իրեն: Անծանօթ նորեկին առնում են տանում էդ քաղաքի թագաւորի պալատը: Պալատում երիտասարդը ծոնկի է գալիս, երկրպագութիւն է անում թագաւորին, ապա թէ գրպանից հանում է պառաւի տւած զմրուխտեայ արկղիկը ու դնում է թագուհու ոտների տակ: Թագուհին հրամայում է վեր կենայ՝ իր ձեռքովը տայ թանկագին նւէրը: Թագուհին բաց է անում արկղիկը մէջը նայում, նայեմն ու ուշաթափ գետնովը դիպչելը մին է լինում: Պալատականներն իսկոյն վրայ են թափում երիտասարդին բռնում են որ բանտը տանեն, թագուհին աչքը բաց է անում, ուշքի է

գալիս, հրամայում է ազատ թողնեն ու իրենք բոլորը դուրս գնան, որ ինքը ուզում է նրա հետ մենակ խօսի:

Մենակ են մնում թէ չէ թագուհին սկսում է լաց լինել ու լաց լինելով էսպէս է խօսում երիտասարդի հետ:

—Ինչիս համար են էս փառքն ու փայլը, երբ ամեն առաւօտ վեր եմ կենում արտասուքով ու ամեն իրիկուն պառկում եմ արտասուքով: Ես երեք աղջիկ ունէի: Փոքր աղջիկս էնքան էր սիրուն, որ տեսնողն ասում էր՝ աղջիկ չի սա—հրաշք է: Զիւնի ճերմակն ու խնձորի ծաղկի կարմիրն իրար էին խառնւած նրա այտերին, իսկ մագերը փայլում էին արևի ճառագայթների նման: Արտասուելիս աչքերից արտասուքի տեղակ ակն ու մարգարիտ էր թափում: Տասնուհինգ տարին որ լրացաւ՝ հէրը երեք աղջկանն էլ կանչեց իրեն մօտ: Տեսնելու բան էր, թէ ինչպէս ամենքն էլ հիացմունքից աչքները չռեցին, երբ ներս մտաւ փոքր աղջիկս: Հէնց իմանաս երկնքից արև դուրս եկաւ:

—Զաւակներս, ասաւ թագաւորը, չեմ իմանում թէ երբ կամ ինչ ժամանակ կը հասնի իմ վերջին օրը, դրա համար էլ ուզում եմ հէնց էս օրւանից որոշել թէ ինչ բաժին էք ստանալու ամեն մէկդ իմ մահից յետոյ: Գիտեմ, որ ամենքդ էլ սիրում էք ինձ, բայց ձեզանից ուրը աւելի շատ է սիրում՝ նա էլ ամենից մեծ բաժինը կը ստանայ: Ասացէք տեսնեմ, ամեն մէկդ ինչքան էք սիրում ինձ, որ ձեր խօսքերով կարողանամ ձեր սէրը չափել:

Մեծն ասաւ.

—Ես քեզ սիրում եմ ամենաքաղցը շաքարի չափ:

Միջնեկն ասաւ.

—Ես քեզ սիրում եմ իմ ամենալաւ զգեստի չափ:

Փոքրը լուռ էր:

Թագաւորը հարցրեց.

—Իսկ դու, իմ ամենասիրելի աղջիկս, դ՞ուք ինչքան ես սիրում ինձ:



—Չը գիտեմ, հայրիկ, պատասխանեց աղջիկը, ոչ մի բանի հետ չեմ կարողանում համեմատել իմ սէրը:

Բայց հէրն ստիպեց որ նա մի բան ասի. էն ժամանակ աղջիկն ասաւ.

—Ամենալաւ կերակուրն էլ ինձ համար համ չունի առանց աղի. ես քեզ սիրում եմ աղի չափ:

Թագաւորն էս որ լսեց՝ կատաղութիւնը բռնեց ու գոռաց.

—Էդպէս... եթէ դու ինձ աղի չափ ես սիրում՝ քո սիրոյ վարձատրութիւնն էլ կը լինի—աղ:

Իր թագաւորութիւնը բաժանեց երկու մեծ աղջիկների մէջ, իսկ փոքրի մէջքին հրամայեց մի տոպրակ աղ կապեն ու տւեց երկու ծառայի, որ տանեն բաց թողնեն մի վայրենի խոր անտառում: Ամենքս նրա համար խնդրեցինք, աղաչեցինք, պաղատեցինք, բայց չեղաւ, չը կարողացանք մեղմել թագաւորի ցասումը:

Ա՛խ, եթէ տեսնէիք թէ ինչպէս էր լաց լինում մեզանից բաժանւելիս: Ամբողջ ճանապարհը շաղ էր անցած էն մարգարիտներով, որ արցունքի տեղակ թափւում էին նրա աչքերից: Սրանից յետոյ շուտով թագաւորը զղջաց իր խստասրտութեան վրայ, բարկութիւնը անցաւ, փոխւեց գութի ու խղճահարութեան. հրամայեց ամեն տեղ որոնեն, գտնեն մեր դժբախտ երեխային, բայց ոչով չը կարողացաւ գտնի: Ամեն անգամ երբ մտքովս անց է կենում, թէ նրան կերած կը լինեն վայրենի գազանները՝ ցաւից ու վշտից տեղս կորցնում եմ, չեմ իմանում թէ որտեղ եմ: Շատ անգամ էլ ինձ մխիթարում եմ էն յուսով, թէ նա կենդանի է դեռ և թաքնւել է մի որևէ քարանձաւում, կամ ապաստան է գտել զթասիրտ մարդկանց մօտ: Հիմի բաց եմ անում ձեր տւած զմրուխտեայ արկղիկն ու յանկարծ տեսնում եմ մէջը էն մարգարիտներից, որ արցունքի տեղակ թափւում էին իմ աղջկայ աչքերից...

Դուք պէտք է ինձ պատմէք—էս մարգարիտը որտեղից է ընկել ձեր ձեռքը:»

Երիտասարդը պատմում է, թէ էս մարգարիտն ստացել էմ մի էս տեսակ պառաւից, որ անշուշտ կախարդ պիտի լինէր, ու ինձ էլ շատ չարշարեց, բայց էդպէս մի աղջիկ ոչ տեսել էմ, ոչ էլ դրա մասին մի որեւէ բան էմ լսած:

Էստեղ թագաւորն ու թագուհին վճռում են՝ ինչ ուզում է լինի՝ գտնեն պառաւին: Ասում է որտեղ էս մարգարիտը գտնուել է, էստեղ էլ կարելի է մի տեղեկութիւն իմանալ իրենց աղջկանից:

Սրանց թողնենք իրենց ճամփէն գնան, մենք դառնանք պառաւին ու իր աղջկանը:

Պառաւն իր տնակի լռութեան մէջ նստած իլիկ էր մանում: Մութն ընկել էր, օջախի կողքին էլւող մարխը մարելու վրայ էր: Յանկարծ դուրսը աղմուկ բարձրացաւ. սագերը հանգից տուն էին վերադառնում ու հեռւից լսում էր նրանց խուլ ձղձոցը: Մի քիչ անց՝ ներս մտաւ պառաւի աղջիկը: Մէրը մի թեթեւ գլխով արաւ: Աղջիկը մօր կողքին նստեց, իլիկն առաւ ու սկսեց թել մանել, էնպէս աշխոյժ, ինչպէս մի ջահել աղջիկ: Էսպէս լուռ մի երկու ժամ նստեցին՝ առանց միմեքեւի կամ միւսը լեզուն պոռնալով տալու: Վերջապէս լուսամուտից մի շրշիւն լսեց ու մթնից ներս նայեցին մի գոյգ կրակոտ աչքեր: Մի պառաւ բոլ էր, որ երեք անգամ կանչեց, բոլ բոլ, բոլ բոլ, բոլ բոլ, ու կորաւ:

Պառաւը գլուխը մի փոքր բարձրացրեց ու ասաւ. «Ժամն եկաւ, աղջիկս, գնա արա, ինչ որ անելու ես:»

Աղջիկը լուռ վեր կացաւ դուրս գնաց: Գնաց, գնաց, դուրս եկաւ մի հովիտ ու հասաւ մի ջրհորի, որի կողքին երեք կաղնի ծառ էին կանգնած:

Լրացած ահագին լուսինն էլ դուրս եկաւ սարերի գլխին ու էնպէս լուս արաւ, որ ասեղ լինէր կորած մարդ կը նկատէր: Լուսնի լուսի տակ աղջիկը հանեց իր հագի խորխը, ջրհորի վրայ կռացաւ ու սկսեց լացել: Յետոյ խորխը ջուրը քաշեց ու փռեց, որ սիպտակի լուսնի լուսի տակ: Եւ միանգամից ինչպէս փոխեց էն այլանդակ աղջիկը: Դուրս եկաւ

կանգնեց մի անտես աննման գեղեցկուհի, որ ոչ ուտես, ոչ խմես, կանգնես ու թամաշա անես: Ճերմակ մագերը գլխին ընկան թէ չէ՝ նրանց տակից՝ ճոխ ոսկէ մագերը էնպէս վերևից ներքև թափւեցին, որ ուր խրձնով արևի շողքերը թափւեան, ու մարմինը պատեցին: Մագերի տակից աչքերը փայլում էին ջուխտ աստղի նման ու այտերը վառում էին կարմիր խնձորի ծաղկի պէս:

Բայց ինքը տխուր-տխուր: Գետին ընկաւ ու սկսեց աղի աղի լաց լինել: Աչքերից արտասուքներն իրար ետևից թափւում էին գետին: Էսպէս նստած լաց էր լինում, ու երկար կըմնար էս դրութեան մէջ, եթէ յանկարծ մօտակայ ծառերից մի խշխշոց չըլսէր ու հետն էլ մի չրտկոց: Հրացանի ձէնը լսած եղնիկի նման տեղիցը ծլուկեղ եղաւ, իսկոյն մտաւ իր հին խորխի մէջ ու մի ակնթարթում չքացաւ, տեղն ու տեղը հանգաւ, որ ուր ճրագին փչես հանգչի: Տերևի նման դողալով հասաւ իրենց տնակը: Տեսաւ մէրը շէմքում կանգնած սպասում է: Ուզեց պատմի, պառաւը մեղմօրէն ասաւ.

— Լաւ, լաւ, աղջիկս, ես ամեն բան գիտեմ: Ասաւ, ներս տարաւ, մարխը վառեց ու մանածը թողած՝ աւելն առաւ, սկսեց տնակն աւելի:

— Ամեն բան իստակ ու մաքուր պէտք է լինի:

— Նանի, էս գիշերայ կիսին ինչո՞ւ ես տունը վեր քաղում:

Մարդ պէտք է գայ՝ ի՞նչ է:

— Գիտե՞ս որ ժամն է, աղջիկս, հարցրեց պառաւը:

— Դեռ գիշերայ կէսը չըկայ, բայց մօտիկ է:

— Իսկ մաքուր չանցա՞ւ, որ սրանից երեք տարի առաջ մին էլ էսօր ես եկել դու ինձ մօտ: Հիմի էս գիշեր ժամանակը լրացաւ, ու մենք էլ միասին ապրել չենք կարող:

Աղջիկը գունատեց հարցրեց.

— Նանի ջան, միթէ ուզում ես ինձ դուրս անես քո տանից: Ո՞ր գնամ ես: Ոչ բարեկամ ունեմ, ոչ տեղ, ո՞ւմ մօտ գնամ: Ինչ ասում ես՝ անում եմ, դու էլ գոհ ես ինձանից, էլ ինչո՞ւ ես դուրս անում...

Պառաւր չէր ուզում ամեն բան պարզի, թէ ինչ էր պատահելու աղջկայ հետ, ու խօսքը փոխեց:

— Էլ էս խրճիթում չեմ ապրելու, ուզում եմ հեռանալ ու հեռանալիս մաքուր թողնեմ. թող սրբեմ: Քեզ համար էլ դարդ մի անի, էլ ետ կըգտնես քո հօրական օջախը, ու գոհ կը լինես էն վարձով, որ ես կըտամ:

— Բայց նանի, ինչ է պատահելու ինձ հետ, կրկին հարցրեց աղջիկը:

— Մի՛ն էլ եմ ասում. ինձ մի խանգարի, թող սրբեմ: Անխօս գնա քո սենեակը, խորխո հանիր ու հագիր քո էն մետաքսէ զգեստը, որ հագիր էր, երբ առաջին անգամ եկար ինձ մօտ: Հագիր ու սպասիր քո սենեակում մինչև կըկանչեմ:

Հիմի թագաւորից ու թագուհուց տանը տեղեկութիւնը:

Թագաւորն ու թագուհին երիտասարդ իշխանին հետներն առնում են ու ճանապարհ են ընկնում, գնում են պառաւին գտնեն:

Երիտասարդը մի անտառում նրանցից ետ է մնում ու պէտք է ճանապարհը մենակ շարունակէր: Միւս օրը նրան թւում է, թէ ուղիղ ճանապարհն է դուրս եկել: Գնում է, գնում է, մի տեղ մութը վրայ է հասնում, բարձրանում է մի ծառի, ուղում է ծառի վրայ գիշերի, առաւօտը վեր կենայ էլ ետ իր ճամփէն շարունակի: Գիշերւայ մի ժամին լրացած լուսնեակը որ դուրս է գալի, նկատում է, որ մի պառաւ լեռներից իջնում է ցած: Նկատում է, որ ճիւղոտը ձեռին չի, բայց էս էն սագարած աղջիկն է, որ տեսել էր պառաւի տնակում:

— Օհօ, բացականչում է ինքնիրեն. ահա մինը եկաւ: Էս մինը որ ձեռս ընկաւ, էն միւսն էլ չի պրծնիլ ինձանից:

Բայց ինչքան է զարմանում, երբ այլանդակ կինը մօտենում է ջրհորին, խորխո հանում է, լացում, ոսկէ մագերը թափում են ուսերին, ու առջևը կանգնում է մի գեղեցկուհի, որ իր օրումը ոչ տեսել էր, ոչ լսել: Շունչն իրեն պահած՝ գլուխը ճիւղերի արանքից հանում է ու աչքերը յառած նայում է աղջկանը: Շատ է լինում դէպի առաջ հակած թէ ինչ, ծառի մի

ճիւղը կոտորում է, որ կոտորում է՝ աղջիկն իսկոյն էլ ետ մըտնում է իր խորխո ու եղնիկի նման թռչում, կորչում:

Աղջիկը հեռանում է թէ չէ, երիտասարդն էլ ծառից իջնում է, ընկնում ետեից: Շատ է գնում թէ քիչ, մին էլ տեսնում է մի տեղ առաջին երկու սուեր են թափառում: Դու մի ասի թագաւորն ու թագուհին են: Հեռից պառաւի մարխի լոյսը նշմարել են, էն լուսի վրայ գնում են: Երիտասարդը պատմում է նրանց ջրհորի մօտ իր աչքով տեսած հրաշքը, ու էլ ոչ մի կասկած չի մնում, որ էն աղջիկը իրենց որոնած աղջիկը պիտի լինի: Երկուսը դառնում են երեք ու գնում: Գնում են, գնում, հասնում են պառաւի տնակին: Տեսնում են սագերը պառաւի տնակի չորս կողմը բռնած, գլուխները թեւերի տակը կոխած՝ քնած են: Ոչ մինը ոչ շարժում է, ոչ ձէն է հանում: Լուսամուտիցը ներս են նայում. տեսնում են ներսը պառաւը նստած իրեն համար իլիկ է մանում: Տունն էլ էնքան մաքուր սրբած, վեր քաղած, հէնց իմանաս մէջը հուրի փէրիներ էին ապրում, որ չըգիտեն աղբն ու փոշին ինչ բան է: Էս ամենը տեսնում են, բայց իրենց աղջկանը չեն տեսնում: Չըկայ: Մի առ ժամանակ էսպէս մտիկ են անում, վերջը սիրտները պնդացնում են, լուսամուտը կամաց ծեծում են: Պառաւը կարծես թէ հէնց սրանց սպասելիս լինէր. տեղիցը վեր է կենում ու քաղցր ձէն տալի:

— Եկէք, ներս եկէք, ես ձեզ ճանաչում եմ:

Ներս են մտնում թէ չէ՝ ասում է.

— Թագաւորն ապրած կենայ, դուք հօ էսօր ստիպւած չէիք լինիլ էսքան երկար. ճանապարհ կտրելու, եթէ երեք տարի առաջ ձեր սիրուն ու բարի աղջկանը, չըգիտեմ ինչի համար, էնքան անիրաւ կերպով դուրս չանէիք ձեր տանից: Էն էլ էն աղջկանը, որ էնքան սիրում էր ձեզ: Ասենք դրանից նրան ոչ մի վնաս չըհասաւ. էս երեք տարին, ճշմարիտ է նա սագ էր արածեցնում, բայց ոչ մի վատ բան չի սովորել ու իր մաքուր սիրտը պահել է անարատ: Բայց դուք ձեր արժանի պա-

տիժն առաք հէնց էն ահ ու դողով, որով ապրում էիք էս երեք տարին:

Ապա մօտենում է կողքի դռանն ու կանչում:

— Դուրս արի, աղջիկ ջան:

Դուռը ետ է բացւում, մետաքսէ զգեստը հագին յայտնւում է թագաւորի աղջիկը, ոսկի մագերը արձակ թափած ուսերին ու թիկունքին, աչքերը ցոլուն աստղեր ու ինքը ամբողջ կարծես թէ հրեշտակ էր, որ երկիր իջաւ:

Դուրս է գալիս, վազում է ընկնում հօրն ու մօր վզովը ու սկսում է համբուրել: Հէրն ու մէրը ուրախութիւնից լաց են լինում, իսկ երիտասարդ իշխանը մնում է ապշած կանգնած նրանց կողքին: Աղջիկը նրան նկատում է թէ չէ, ինքն էլ չի իմանում ինչու, կարմրում, կարմիր վարդ է կտրում: Թագաւորն ասում է.

— Աղջիկ ջան, իմ թագաւորութիւնը արդէն բաժանել եմ. հիմի ի՞նչ տամ քեզ:

— Սրան ոչ մի բան չի հարկաւոր, աղջկայ տեղակ պատասխանում է պառաւը: Ես ձեզ եմ նւիրում սրն էն արտասուքները, որ թափել է ձեզ համար. սրանք մաքուր մարգարիտներ են, աւելի մաքուր ու թանգ, քան էն մարգարիտները, որ հանում են ծովերից, և աւելի արժեն, քան ձեր ամբողջ թագաւորութիւնը: Իսկ իրեն, ինձ արած ծառայութեան համար, նւիրում եմ իմ տնակը:

Պառաւի էս ասելն ու անհետանալը մին է լինում: Մին էլ էն են տեսնում տնակի պատերը ճրճռացին. նայում են տնակը դարձել է մի չքեղ պալատ, թագաւորավայել սեղանները բաց արած, բազմաթիւ ծառաները վազում են դէս ու դէն ու ձերմակազգեստ ջահել աղջիկներ շրջապատել են իրենց:

Դուրս է գալիս, որ պառաւը ոչ թէ մի չար կախարդ է եղել, այլ բարի ոգի: Նա է տւել թագաւորի աղջկանն էն շնորհքը, որ արտասուքները մարգարիտ դառնան ու նա է նրան պահել դժբախտութեան օրերում: Նա է պահել և էն բոլոր կախարդւած ու դժբախտացած աղջիկներին, որ դարձել էին

սագեր, այժմ նորից առան իրենց մարդկային կերպարանքը: Վերջապէս նա է աւաշնորդել բարի երիտասարդ իշխանին դէպի թագաւորի անմեղ հալածւած աղջիկը:

էս բոլորից յետոյ ամուսնանում են նրանք, մոռանում են իրենց անցկացրած ծանր օրերը, և ապրում են ուրախ ու երջանիկ բարի ոգու պարգևած էն գեղեցիկ պալատում, որ առաջ չէր աղքատիկ տնակ էր:





ՋԱՐՄԱՆԱԼԻ ԱՇՈՒՂԸ

Մ

ի աշուղ է լինում: Օրերից մի օր էս աշուղը մենակ վեր է կենում գնում անտառը: Անտառում դէս է մտածում դէն է մտածում, մինչև որ մտածելու բանը հատնում է: Որ մտածելու բանը հատնում է՝ «Օֆ, ասում է, ինչ եր-

կար ու ձանձրալի է ժամանակը էստեղ: Պէտք է մի լաւ ընկեր գտնեմ ինձ համար...»

Ասում է, ջութակն ուսից վեր է բերում ու նւագում: Ջութակի ձէնը հնչում է անտառում: Էս ձէնի վրայ անտառի խորքից վազէվազ դուրս է գալիս մի գէլ:

—Ա՛խ, գէլը... հառաչում է աշուղը: Բայց ես սրան չէի ուզում... Ես գիլի հետ ի՞նչ անեմ...» Իսկ գէլը մօտ է գալիս ու սկսում է խօսել:

—Էդ ի՞նչ լաւ ես նւագում, վարպետ: Ի՞նչ կը լինի ինձ էլ սովորեցնես:



—Սրա սովորեցնելն ինչ բան է որ, պատասխանում է աշուղը: Կը սովորեցնեմ, միայն թէ ինչ որ ասեմ պէտք է լսես:

—Աչքիս վրայ, խօսք է տալիս գէլը: Էնպէս լսեմ, ինչպէս աշկերտը վարպետին կը լսի:

—Դէ որ էդպէս է՝ ետեիցս արի:

Գնում են: Գնում են, գնում են, տեսնում են ձանապարհին մի պառաւ կաղնի, մէջը փուշ, ինքը ճղւած:

—Դէ հիմի լսիր, տես ինչ եմ ասում, դառնում է աշուղը գիլին: Եթէ ճշմարիտ սրտով ուզում ես նւագել սովորես՝ ամենից առաջ պէտք է առջևի թաթերդ էս ծառի ճեղքումը դնես:»

Գէլը լսում է վարպետին, առջևի թաթերը դնում է ծառի ճեղքում: Վարպետը ձեռաց կողքի մեծ քարը վերցնում է էնպէս ուժով՝ զարկում աշկերտի ջութակ թաթերին ու էնպէս խորը մխում ծառի ճեղքի մէջ, որ խեղճը տեղն ու տեղը նըստում է ու մնում է գերի էն ծառին:

—Էստեղ կաց մինչև մին էլ ետ կը գամ, ասում է վարպետն ու գնում: Մի քիչ որ գնում է դարձեալ սկսում է ինքն իրեն հետ խօսել:

—Օֆ, ի՞նչ երկար ու ձանձրալի է ժամանակն էստեղ... Պէտք է մի լաւ ընկեր գտնեմ ինձ համար...

Ասում է, ջութակն ուսից վեր է բերում ու նւագում: Մին էլ տեսնում է ծառերի արանքից դուրս եկաւ աղւէսը:

—Հիմի էլ աղւէսը... բայց ես սրան էլ չեմ ուզում... Աղւէսի հետ ի՞նչ անեմ, հառաչում է աշուղը, իսկ աղւէսը գալիս է առաջը կարում:

—Էդ ի՞նչ լաւ ես նւագում, վարպետ: Ի՞նչ կը լինի ինձ էլ սովորեցնես:


—Ինչու չէ, կը սովորեցնեմ, պատասխանում է աշուղը, միայն թէ ինչ որ ասեմ պէտք է լսես:

—Աչքիս վրայ, խօսք է տալիս աղւէսը: Էնպէս լսեմ, ինչպէս աշկերտը վարպետին կը լսի:

—Դէ որ էդպէս է՝ ետեիցս արի:

Աղւէսն ուրախ ուրախ ընկնում է վարպետի ետևից ու գնում են: Գնում են, գնում են, մտնում են մի նեղ կածան, երկու կողմից բարձր թփեր: Վարպետն էստեղ կանգ է առնում, ճամփի մի կողմից մի փոքրիկ ընկուզի ծառի ծէր է կռացնում դէպի գետին ու ոտը դնում վրէն, միւս կողմից էլ մի ուրիշ ծառ ու կանչում է աղւէսին.

—Հապա դէ եկ, սիրելիս. եթէ ուզում ես բան սովորես՝ դէսը բեր առջևի ձախ թաթդ:»



Աղւէսը լսում է, թաթը մեկնում է: Վարպետը բռնում է կապում ձախ ծառի կատարին:

—Դէ հիմի էլ աջը բեր:

Աջն էլ կապում է աջ կողմի ծառի կատարին: Յետոյ մտիկ է անում՝ ամուր են կապած թէ չէ, ու բաց է թողնում ծառերի կատարները: Ծառերը ետ են գնում, վերև են թռցնում աղւէսին ու սկսում են ճօճել օդի մէջ:

—Էստեղ կաց, մինչև մին էլ ետ կը գամ, ասում է վարպետն ու շարունակում իր ճամփէն:

Մի քիչ որ անց է կենում, նորից սկսում է ինքնիրեն

խօսել. —Օ՜ֆ, ի՜նչ երկար ու ձանձրալի է ժամանակն էստեղ... Պէտք է մի լաւ ընկեր գտնեմ ինձ համար...» Ասում է, ջուր թակն ուսից վեր է բերում ու նւագում: Ուտոստալով առաջն է եկնում մի նապաստակ:

—Համեցէք. հիմի էլ նապաստակը... բայց ես սրան էլ չեմ ուզում... Ես նապաստակի հետ ի՜նչ անեմ, հառաչում է աշուղը, իսկ նապաստակը մօտ է գալի.

—Էդ ի՜նչ լաւ ես նւագում, վարպետ: Ի՞նչ կը լինի ինձ էլ սովորեցնես:

—Ինչո՞ւ չէ, կարելի է, և հեշտ էլ կը սովորես: Միայն թէ ինչ որ ասեմ պէտք է լսես:

—Աչքիս վրայ, խօսք է տալիս նապաստակը: Էնպէս լսեմ, ինչպէս աշկերտը վարպետին կը լսի:

—Դէ որ էդպէս է՝ ետևիցս արի:

—Գնում են: Գնում են, գնում են, դուրս են գալիս անտառի մէջ մի բացատ: Բացատի մէջ տեղը կանգնած է լինում մի բարդի: Վարպետը մի թուկ է հանում, թուկի մի ծէրը ծառից է կապում, միւս ծէրը նապաստակի վզից ու կանչում է.

—Հապա, իմ խլուշիկ, դէ մի քսան անգամ էս ծառի բոլորքով պտուտ արի, տեսնեմ քո ճարպիկութիւնը:» Նապաստակը լսում է. քսան անգամ պտուտ է գալի ծառի բոլորքով: Թուկը փաթաթւում է ծառին, խեղճը մնում է ծառին կպած ու քսնի ձիգ է տալիս, քաշում, քաշքշում, էնքան թուկը վիզը կտրում է:

—Էստեղ կաց, մինչև մին էլ ետ կը գամ, ասում է վարպետն ու իր ճամփէն շարունակում:

Վարպետի գնալուց ետը դէս է ձիգ տալի, դէն է ձիգ տալի գէլը, քարն է կրծում, ծառն է կրծում, էնքան անում է, մինչև թաթերը հանում է կաղնու ճեղքից: Հանում է ու, թէ չորս ոտն ունէր՝ չորսն էլ փոխ է առնում, կատաղած, գազազած ընկնում է վարպետի ետևից, որ հասնի պատառ պատառ անի: Օգում ճօճող աղւէսը հեռից ազատ գիլին տեսնում է թէ չէ՝ սկսում է լաց լինել ու աղաղակել.

—Գէլ ախպէր, գէլ ախպէր, հասի՛ր, օգնի՛ր ինձ, էն վարպետը ինձ խաբեց:»

Գէլը հասնում է ծառերը կռացնում, թռկերը կրծոտում, կտրատում, աղւէսին ազատում, ու երկուսով միասին ընկնում են վարպետի ետեւից, որ իրենց վրէժը հանեն:

Գնում են, գնում են, ճամփին պատահում են ծառին փաթաթլած նապաստակին: Սրան էլ էստեղ են ազատում ու երեքով միասին լարւում են ընդհանուր թշնամու—վարպետի ետեւից:

Վարպետը շարունակում է իր ճանապարհն անտառում: Մի անգամ էլ նւագում է, ու էս անգամ բախտը բանում է: Զուլթակի ձէնը լսում է մի աղքատ փայտահատ, գործը թողնում է, կացինը դնում է կռնատակին՝ դալիս է կանգնում երգը լսելու:

—Վերջապէս եկաւ իմ ընկերը, բացականչում է վարպետը: Ես մարդ էի որոնում, ոչ թէ վայրենի գազաններ:» Ու սկսում է նւագել էնքան սրտառուչ, էնքան հրաշալի, որ փայտահատը զմայլում է, սիրտը կրծքում ուրախութիւնից խաղս է լինում: Հէնց էս ժամանակ վրայ են հասնում գէլը, աղւէսն ու նապաստակը: Փայտահատը նկատում է, որ նրանց մըտքում չար բան կայ վարպետի դէմ, իսկոյն առաջ է անցնում, բարձրացնում է իր սուր կացինն ու ասում.— ով սրա վրայ գայ, իմացած կենայ, որ ինձ հետ է գործ ունենալու:»

Գազանները էս որ տեսնում են՝ սարսափում են ու, պոկ, ետ են փախչում դէպի անտառի խորքերը: Վարպետը փայտահատին շնորհակալութիւն անելու համար մի երգ էլ նւագում է ու գնում: Գնում է հասնում իր տունը, ջուլթակը պատին կախում ու պառկում: Գիշերը գալիս է. ուզում է քնի, քունը չի տանում: Շարունակ գէլը, աղւէսն ու նապաստակն են մտքի մէջին: Մին էլ յանկարծ գիշերւայ մի ժամանակը հէնց լուսամուտի տակին, գէլն ու աղւէսը սկսում են ձէն ձէնի տալ ու ոռնալ, իսկ նապաստակը նրանց ետեւից ծւծւում է:



—Ճը՛ղը, վը՛ղը, քաջ վարպետ,
էն ի՛նչ արիւր դու մեզ հետ.
մեզ տանջել 'իր ուզում դուն,
տանջւի՛ր հիմի դէ գարթուն.
մինչև լուսը մենք էսպէս
հանգիստ քուն չենք տալու քեզ...
ճը՛ղը, վը՛ղը, քաջ վարպետ,
էն ի՛նչ արիւր դու մեզ հետ...»

Երգում են, երգում են անասունները: Զուլթակն էլ պատի վրիցն է սկսում իրեն իրեն նւագել նրանց հետ, ու էնպէս աղեկտուր, էնպէս ողբալի, որ խեղճ վարպետը չի իմանում ուր կորչի էն երգի ու երաժշտութեան ձէնից: Ամբողջ գիշերը չի կարողանում աչքը կպցնի, տանջւում է ու տանջւում:

Ծերերն ասում են, իբրև թէ վարպետը էն օրւանից ետը ինչքան ապրեց աշխարհքում՝ ամեն գիշեր նրա լուսամուտի տակ հնչում էր էս տխուր, սրտաճմլիկ երգը:

«Ճը՛ղը, վը՛ղը, քաջ վարպետ,
էն ի՛նչ արիւր դու մեզ հետ...»

Ու ջուլթակը ողբում էր հետը: Ամեն գիշեր, ամեն գիշեր մինչև լուսը, մինչև իր մահը:



[Faint, illegible text visible through the paper, likely bleed-through from the reverse side. The text appears to be organized in paragraphs.]

[A blank, aged, yellowish-brown page, likely the reverse side of the document, showing signs of wear and discoloration.]

477

0009735

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004735

